

Հ. Մ. Դավթյան

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ-ԿԱԹՈՒԿՆԵՐԻ ԳԱՂՏՆԻ ՏՊԱՐԱՆԸ

Հայկական տպագրության հին շրջանի մի շարք հարցեր գեոևս անլուծելի են մնում դրանց վերաբերյալ արխիվային փաստաթղթեր չլինելու պատճառով: Ուսումնասիրողի համար միակ աղբյուրը հնատիպ գրքերն են, նրանցում եղած հիշատակարանները, մասամբ էլ այլ աւիթանրով արված հատուկներ հիշատակությունները: Դժբախտաբար մինչև այժմ չունենք հայ հնատիպ գրքերի լիակատար մատենագիտություն, մի հանգամանք, որ դժվարացնում, նույնիսկ անհնարին է դարձնում հայ տպագրության պատմության լազմակողմանի ուսումնասիրությունը: Վերջնականապես շուսարանված այդ հարցերից մեկն էլ Կ. Պոլսի Բեզոզլի կամ Գերա (Պեկոզլի, Բերա) թաղամասում 17-րդ դարավերջում Հոռմի լատին կրոնավորների օգնությամբ, կաթոլիկ հայերի հիմնադրած գաղտնի տպարանի ու տպագրիչների գործունեությունն է: Այստեղ շատ գրքերի հետ տպագրվել են այնպիսի արժեքավոր հրատարակություններ, ինչպիսիք են Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոցը», Խորենացուն վերաբերված «Աշխարհացոյցը» և «Աղուլճագիրք» Բ տպագրությունը, Խաչատուր էրզրումեցու «Քերականությունը», տաղարաններ, տոմարներ, այրենարաններ: Մատենագիտական աղբյուրներում և տպագրությանը նվիրված ուսումնասիրություններում հիշատակվել են այդ տպարանում լույս տեսած գրքերը, յայց րանասերները, հիմնվելով տիտղոսաթերթերի կեղծ տվյալների վրա, դրանք նամարել են Լիվոնոյի, Մարսելի, Ամստերդամի տպագրություններ:

Բեզոզլի թաղամասի տպարանի մասին առաջին անգամ տեղեկացնում է Գ. Գալեմբյարյանը «Հանդես Ամսորեայի» 1911 թ. մայիսի համարում տպագրված «Սարգիս Սալթիկի Գասպարեան» հոդվածում<sup>1</sup>:

Հիշատակելով Սալթիկի մականվանյալ Սարգիս Եպիսկոպոս Գասպարյանի կողմից լույս ընծայված Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոցը» և «Չայնթաղ շարականը», Գալեմբյարյանը գրում է. «Թէպէտ այս երկու գրքերն, ինչպես նաև ուրիշ մէկ քանիներ Եւրոպա տպուած ցոյց տրուած են տպագրիչներէն, եւ կամ տպագրութեան տեղին զանց առնուած, սակայն ստույգ ապացոյցներ ունիմ, որ ասոնք Կ. Պոլիս տապգրուած են հայ կաթողիկէներու եւ Յիսուսեաններու իբր 1695-ին Պէյոզլու հաստատուած տպարանին մէջ, որում վրայ առանձին զխով պիտի յօսիմ»<sup>2</sup>:

Հետագայում, որքան մեզ հայտնի է, Գալեմբյարյանը այդ հարցին չի անդրադարձել և դրա վերաբերյալ որևէ այլ ուսումնասիրություն չունի: 1912—1913 թթ. մեծանուն րանասեր Արշակ Ալպոյաճյանը «Տպագրութեան արուեստ և Հայք» ստվարածավալ, դեռևս ամբողջությամբ չտպագրված, աշխատության մեջ, խոսելով այդ հարցի մասին, հաստատում է Գալեմբյարյանի բացմանը, ավելացնելով մի շարք կարևոր մանրամասնություններ և թվարկելով նրանց հրատարակություններից մի քանիսը<sup>3</sup>:

Գալեմբյարյանից և Ալպոյաճյանից հետո այս հարցը ուրիշ որևէ մեկի ուշադրությանը չի արժանացել և հայ տպագրության շուրջը եղած աշխատություններում մինչև օրս էլ շարունակում է զանց առնվել: Այժմ էլ, անցյալ դարի մատենագետների նման, կաթոլիկների հրատարակած գրքերը վերագրվում են այլ տպարանների կամ առանձին անհատների: Դրանով այդ շրջանի տպագրության պատմությունը ներկայացվում է իրական հիմքից, ժամանակի հասարա-

1 Միայն վերջերս Ալ. Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանը լույս ընծայեց «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ»-ը, որը նշանակալից ներդրում է հնատիպ գրքերի լիակատար մատենագիտություն կազմելու գործում:

2 Այդ հոդվածը հետագայում մտել է հոդվածակի 1915 թ. Վիննայում հրատարակած «Կենսագրություններ երկու հայ պատրիարքներու եւ տասն Եպիսկոպոսներու» աշխատության մեջ:

3 «Հանդես Ամսորեայի», 1911, մայիս, էջ 230; Տե՛ս նաև՝ Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու...», էջ 83—84:

4 Այս աշխատության մի մասը տպագրվել է «Արօր»-ի 1913 թ. Ա գրքում:

կական հոսանքների պայքարից կտրված: Դեռևս շարունակվում է խոսվել XVII դ. վերջին տասնամյակում և XVIII դ. սկզբներին Մարսելի, Լիվոռնոյի տպարանների և Ամստերդամում վանակեցիների տպարանից բացի մի այլ անհայտ տպարանի մասին:

Հիմնվելով 1660—1720 թթ. ընթացքում Ամստերդամում, Լիվոռնոյում, Մարսելյում և Կ. Պոլսում լույս տեսած գրքերի հիշատակարանների, տառատեսակների, պատկերների և կողմնակի այլ փաստերի վրա, ներկա հոդվածում փորձել ենք հնարավորին չափ հանգամանորեն խոսել Կ. Պոլսի հայ կաթողիկոսների տպարանի հիմնադրման, հրատարակիչների, նրանց հրատարակած գրքերի և առնչվող այլ հարցերի մասին:

\* \* \*

Կ. Պոլսի հայ կաթողիկոսների տպարանը գոյություն է ունեցել բառուրդ դարից ավելի և այնտեղ տպագրվել է մոտ հիսուն անուն գիրք: Դրանցից մի մասի տիտղոսաթերթերում իբրև հրատարակության վայր ցույց են տրված Լիվոռնոն, Մարսելյը, Ամստերդամը, մի մասի վրա էլ տպագրության իսկական վայրը՝ Կ. Պոլսը: Կան այդ տպարանի մի քանի հրատարակություններ էլ, որոնց վրա որևէ բաղար չի նշված: Կ. Պոլսի տպագրություն ցույց տրված գրքերից մի քանիսում նշվում է նաև՝ «Ի թաղն Պեկոզլի» և տպագրող-հրատարակիչների անունները, բայց երբևր հստակությամբ չի ասվում, թե ում է սյուտկանում տպարանը: Իբրև կանոն այդ գրքերը կամ բողոքովին չունեն կամ ունեն շատ կցկտուր հիշատակարաններ: Հաճախ մանվածապատ են նույնիսկ տիտղոսաթերթերը, երբեմն բերվում են միայն հիշատակվող անունների սկզբնատառերը կամ դրանք փոխարինվում են «ունմամ» գերանունով: Ամեն բանից երևում է, որ հրատարակիչները աշխատել են թաքցնել հրատարակության հանգամանքները: Սակայն շատ իրողություններ, որոնք ժամանակակիցների համար անհասկանալի ու մութ են եղել, այժմ տեսանելի են, որովհետև հնարավորություն ունենք պատմական զեպրերն ու իրողությունները դիտելու բոլոր կողմերից, միմյանց հետ համադրելով: Այսպես, միևնույն տարում տպագրված՝ երևմտա Մեղրեցու «Թառգիրք Հայոցի» և «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանցի» վրա տպագրության տարեթիվն ու ամսաթիվը բերված են հետևյալ ձևով.

«Ան Յվականութեանս Հայոց, ՌՃԽԷ, յունիս. Ժ.

և ի թվին փրկչին. 1698 յունիսի. ԺԾԾ:

Այս երկու տողերը, ինչպես և ամբողջ տիտղոսաթերթի տառերը, շարվածքը, ձևավորումը այնքան նման են միմյանց, որ կասկած չեն թողնում դրանց նույն վայրում և տպարանում շարված լինելու մասին: Սակայն «Թառգրքի» վրա իբրև տպագրության վայր նշված է Լիվոռնոն («Ի յԱլիկոռնայ բաղարի»), իսկ «Գիրք աշխարհացի» վրա բաղարի անունը լրաց է թողնված: Կ. Պոլսում տպագրված գիրքը մի այլ բաղարի հրատարակություն համարելու կեղծիքը շատ ավելի ակնհայտ է 1708 թ. իբրև թե Մարսելյում տպագրված «Տոմարից»: Այդ գրքի տիտղոսաթերթում նշված է. «Ի Մարչիիայ բաղարի»: Իսկ հիշատակարանում ասված է. «Աւարտեցաւ գրոյցս որ կոչի Յովասափի, ի թվին Քրիստոսի ՌՃԽԷ և հայոց ՌՃԾԸ, ի մայրաքաղաքն Ըստամպոյ, ի թաղն Պեկոզլի կոչեցեալ»:

Նաչատուր Էրզրումեցու 1696-ին լույս տեսած «Գիրք բերականութեան» վերջում զետեղված «Վկայութեան» մեջ Հովհաննես Կաֆայեցին գրում է. «Մուտի վկայութեամբ հաստատեմ գվերոյ գրեցեալս, և մատանեալ իմով կնքեմ: Ի ծագրեցի դա. Յամի տեառն մերոյ՝ ՌՌՂԵ, և բստ մերոյ համարողութեանն ՌՃԽԷ, յօգոստոսի Ժն: Կոստանդինուպոլիսու նաև՝ սրբազրութեամբ՝ Յօհաննու վարդապետի Կաֆայեցոյ»:

«Վկայութեան» Կ. Պոլսում գրված լինելը ևս ապացույց է, որ գիրքը տպագրվել է հենց Կ. Պոլսում: Հայտնի է, որ հիշյալ ժամանակներում Լիվոռնոյն հայերը դավանական և բաղարական բոլոր հարցերում հոռմեական եկեղեցու խստագույն հսկողության տակ էին: Առանց վեր-

5 Այստեղ և հետագայում ուղղագրությունը սյահպանել ենք այնպես, ինչպես բնագրերում է:

6 Այս առթիվ արժեքավոր փաստաթղթեր կան 1891 թ. Վենետիկում լույս տեսած Մ. Ուղուրյանի «Պատմութիւն Հայոց պաղթականութեան և շինութեան եկեղեցոյ նոցայ ի Լիվոռնոյ բաղարի» աշխատության մեջ: Հիշյալ ժամանակներում Լիվոռնոյում հայկական տպարան չի եղել մասին է խոսում նաև սույն աշխատության էջ 63-ի հետևյալ ծանոթությունը. «Մենք սչ սակաւ հետազոտութիւն բրած ենք ի իւտսնոյ, որպէս նաև էմիլ Դեզա անուն հայազգև Խտալացին Հայկական տպարանին հետքն և անոր վերաբերեալ յիշատակութիւնքն գտնել, ձեռննտու ունելով մեզ Հայրօնեան գրատան վերակացուն, այլ իզուր եղաւ մեր աշխատութիւնն և չգտաւ ինչ ժամանակին հեռաւորութեան համար»:

չինիս միջամտության ու նսկողության կիրառնույում հայկական տպարան գործել չլը կարող և աջնուեղ տպագրված գրքի վկայութունը կգրվեր ոչ թե Կ. Պոլսում և պոլսեցի (թեկուզ կաթոլիկ) վարդապետի ձեռքով, այլ՝ Հռոմի Հավատի տարածման ժողովի ներկայացուցչի կողմից։ Նախքան այս տպարանի լույս ընծայած գրքերի և նրանց հրատարակիչների մասին խոսելը, տեսնենք, թե ո՞րն է այդ անսովոր երևույթի պատճառը, ի՞նչն է ստիպել հրատարակիչներին խուսափել իրենց անունները հիշատակելուց, թաքցնել տպարանը և Կ. Պոլսում տպագրված գրքերի վրա հեռավոր այլ քաղաքների անուններ դնել։

Հասարակական տարբեր հոսանքների պայքարի ամենազոր միջոցներից մեկը տպագիր խոսքն է, գիրքը, և, բնական է, որ գրքի տպագրությունը սերտորեն առնչվում է դասակարգերի կամ հասարակական հոսանքների պայքարի հետ։ Կ. Պոլսի հայ հոգևորական խավը և նրան հարող վաճառականներն ու աղևակահանները վաղ ժամանակներից սկսած բաժանված էին երկու հակամարտ խմբավորումների՝ լուսավորչականների և կաթոլիկների։ Պայքարը հատկապես կատաղի բնույթ ստացավ XVII դ. վերջերում և XVIII-ի սկզբներում։ Թեև հակառակորդները միմյանց դեմ կոչվում էին քրիստոնեական խաղաղասիրության, մարդասիրության, արդարության անունից, բայց ամենաանմաբույհային ու ամենադաժան հաշվահարդար էին տեսնում միմյանց նկատմամբ։ Թուրքական տիրապետության պայմաններում պայքարի ընդունված եղանակները մատնությունը, քաղաքական մեղադրանքն ու բանասիրություններն էին։ Կողմերը հիմնականում կոչվում էին պատրիարքական աթոռի և ազգային այլ պաշտոնների համար։ Կաթոլիկ դավանության պատմիչներից մեկը այդ կապակցությամբ գրում է. «Թէ անգամ մը Չամչևան վարդապետին ժամանակագրական տախտակները աչքէ անցրենք, կը տեսնենք, որ 100 տարուան միջոցի մէջ, այսինքն է՝ 1600-էն ց 1700... առնուազն քառասուն ու վեց պատրիարքներ նոյն աթոռը ելած ու իջած են»<sup>7</sup>։

Սարսափելին այն էր, որ հակառակորդները միմյանցից վրեժ լուծելու համար դիմում էին «տարներին»՝ թուրքական բռնապետության պետական պաշտոնյաներին և կամ Հռոմին։ Թուրքական կառավարությանը ձեռնադրելու հայ ժողովրդի միասնությունը ջլատող ներքին այդ պայքարը Արտաքաղաքական այդ կառավարությունը իբր թե լուսավորչական հայերի կողմն էր՝ ի դեմս կաթոլիկ հայերի տեսնելով Հռոմի քաղաքական ու դավանական կողմնակիցներին։ Իրականում, սակայն, նրա աչքի լույսը չէին նաև լուսավորչականները։ Կաշառակեր բարձրաստիճան պաշտոնյաները աշխատում էին նախ թուլացնել և ապա դրամական օգուտներ ստանալ թե՛ մեկ և թե՛ մյուս կողմերից։ Կար մեկը, ժամանակի առաջագնմ մտածող Երեմիա Չելիպի Քյոմուրճյանը, որը տեսնում էր հայ ժողովրդի շահերին հակասող այս պայքարի անհեթեթությունը և հաշտության ու միաբանության կողմ էր անում, բայց անձնական շահի ու մանր կրքերի մեծ ազդեցից խլացած կողմերը ճշմարիտ խոսք լսելու ընդունակ չէին։ Այդ ժամանակների անցուդարձերի մասին շատ բաներ մեզ է հասել Երեմիա Չելիպի Քյոմուրճյանի գեղեսուկանապատի «Տարեգրական պատմութիւն» և այլ աշխատություններից։

Իրենց ազդեցությունը ամբողջ ազգի վրա տարածելու համար կաթոլիկ պարագլուխները ոչ միայն ձգտում էին ձեռք գցելու Կ. Պոլսի և Երուսաղեմի այդ ժամանակներում միացյալ պատրիարքական աթոռը, այլև տպագիր խոսքի միջոցով տարածելու հռոմեական դավանանքը։ Սակայն քանակով համեմատաբար քիչ լինելով (իսկ կառավարությունը, ինչպես ասվեց, առերևույթ լուսավորչականների կողմն էր), կաթոլիկները գործում էին խիստ զգույշ, շատ զնայելով՝ ծածուկ։ Այդ պատճառով էլ խուսափելով հրատարակումներից ու դատական պատասխանատվությունից, հետքերը թաքցնելու համար, իրենց հրատարակած գրքերի վրա նշում էին ուրիշ քաղաքներ, տպարանը ապահովության համար անվանում էին մերթ «Ս. Էջմիածին և ս. Սարգսի զօրավարի», մերթ «Յանուն սուրբ Էջմիածնի», մեծ մասամբ տպարանը չէին հիշատակում, հիշատակարաններ չէին դնում, իսկ եղածներում էլ խուսափում էին բերել հրատարակությունը և տպագրությունը մասնակցած մարդկանց անունները։ Տպագրության վայրն ու տպագրիչների անունները թաքցնելը Եվրոպայում տարածված երևույթ էր։

Հայ տպագրության պատմության մեջ նման դեպք առաջին անգամ պատահել է Մարտիկյանում։ Այստեղ 1676 թ. Ոսկան Երևանցու տպարանը ժառանգող Սողոմոն Լևոնյանն իր ընկերների հետ տպագրում է մի «Մաշտոց», որի տպարանակի մի մասի վրա իբրև տպագրության

7 Ա. Ղ. Պ ա լ ճ և և ն, Պատմութիւն կաթոլիկ վարդապետութեան ի Հայս, Վիեննա, 1878, էջ 166։

վայր նշված է Մարսելը, մի մասի վրա էլ Զմյուռնիայի անունն է՝ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան պետական մատենադարանում պահվում է այդ տպագրությունից երկու օրինակ, որոնցից մեկի տիտղոսաթերթի վրա նշված է տպագրության իսկական վայրը՝ Մարսելը (Հնատիպ գրքերի րաժին № 1164), իսկ մյուսի վրա իբրև տպագրության վայր ցույց է տրված Զմյուռնիան (Չեռագրերի րաժին № 2423):

Հայտնի են նաև այլ օրինակներ, սակայն, դրանք հազվադեպ են: Գրքերը մի քաղաքում տպագրելու, բայց այլ քաղաք ցույց տալու կեղծիրը լաթն շափով կիրառելու Կ. Պոլսի Բեզոզ-լի թաղամասի տպարանի հիմնադիր կաթողիկ հայերը:

Տեսնենք, թե ե՛րբ է հիմնադրվել այդ տպարանը:

Որևէ գրավոր հիշատակություն չկա, թե ումից կամ ի՛նչ ճանապարհով են հայ կաթողիկեները ձեռք բերել իրենց տպարանը: Չի հիշատակվում նաև տպարանի հիմնադրման ստույգ թվականը: Այս հարցերից առաջինի մասին րավարար տեղեկություններ են ստանում «Սթանբուլի Պեղակաթի» նշումով գրքերի և Ոսկան Երևանցու տպարանի գրքերի համեմատությունից: Այդ երկու տպարանների հրատարակություններն ունեն մի շարք այնպիսի ընդհանրություններ, որոնք վկայում են Ոսկանի տպարանը կաթողիկեներին անցնելու: մասին, Այդ ընդհանրություններից կարևորներն հետևյալներն են.

ա) Ոսկան Երևանցու Աստվածաշունչ, Շաբաթական և այլ հրատարակություններում հանդիպող հույանդացի փորագրիչ C.V.S-ի (Կոնստանտինոս վան Սիգեմ) ստորագրությամբ պատկերները օգտագործված են նաև Կ. Պոլսում կաթողիկեների տպագրած գրքերում: Միևնույն են նաև զխազարդերը, վերագարդերը, լուսանցազարդերն ու գարդարները:

բ) Կաթողիկեների բոլոր հրատարակությունները շարված են ոսկանյան մանր ու միջին չափսի տառերով:

Պատահական չէ, որ կաթողիկեներն իրենց գրքերի տիտղոսաթերթերում դնում են այն քաղաքների անունները, ուր գրքեր են տպագրել Ոսկան Երևանցին և նրա ժառանգները (Ամստերդամ, Լիվոռնո, Մարսել): Մի շարք գրքերի վրա նրանք նշել են Ոսկանի տպարանի անունը՝ «Ս. Իսմիթի» և ս. Սարգսի զօրավարի: Նկատելի է նաև, որ իրենց տպագրած գրքերում հաճախակի են հիշատակում Ոսկանի անունը:

Թե ի՛նչ ճանապարհով և ո՛ր թվականին է Ոսկանի տպարանը կաթողիկեների ձեռքն անցել, այնուհասակում չէ: Սակայն, Ոսկանի մահից հետո նրա տպարանի գործունեությունը, այնտեղ լույս տեսած գրքերի տիտղոսաթերթերում և հիշատակարաններում բերված անունները, տպագրության հանդամանքների մասին եղած տեղեկությունները որոշակի շատ բան են ասում այդ տպարանի հետագա ճակատագրի մասին: Հայտնի է, որ Ոսկանի մահից հետո նրա տպարանը անցնում է իր բնորդի Սողոմոն Լևոնյանին: Վերջինս Մատթեոս Վանանդեցու և Նասիր Գրիգորյանի հետ 1674—1683 թթ. տպագրում է մի շարք գրքեր: Այնուհետև Ոսկանի տպարանից դուրս եկած ուրիշ հրատարակություններ էլ կան, որոնց մեջ մեծ մասամբ միայն Մատթեոս Վանանդեցու անունն է հիշատակվում, բայց ոչ թե իբրև տպարանատեր, այլ շարարարողի (գրաշար) և կամ սրբագրողի: Օրինակ, 1683-ին տպագրությունն սկսված, և 1684-ին ավարտված «Պարտեզ Տոգևորի» հիշատակարանում ասվում է, «Հալանթեթամը տեառն Ոսկանի Արքիևկոսկոպոսի Երեանեցոյ հսկոցեցոյ առ Քրիստոս: Երարարողութեամբ և սրբագրութեամբ Մատթեոսի Վանանդեցոյ: Հայտնի է նաև, որ 1669 թ. Ոսկանի կողմից սկսված՝ «Շարակնոցի» տպագրությունն ավարտում է Պետրոս Զուղայեցին 1680-ական թվականներին, առանց Լևոնյանի մասնակցության: Այս շրջանում տպագրված գրքերում Սողոմոն Լևոնյանի անվան բացակայությունը դույց է տալիս, որ նա հեռացել էր ասպարեզից: Հիմնվելով Մատթեոս Վանանդեցու 1685 թ. սեփական տպարանում տպագրած «Շարակնոցի» հիշատակարանում արված մի ակնարկի վրա, ենթադրում ենք, որ 1684 թ. Սողոմոն Լևոնյանը վախճանված պետք է լիներ: Այդ հիշատակարանում Մատթեոսը գրում է, «ես նուսաստս յամենից Մատթեոս դպիրս՝ եկի ծառայելու արևնակից վարդապետին իմոյ յերկիրն յԻտալացոցս ու ի մայրաքաղաքն Զոսմ, և վե՛ն իմ

՝ Այս մասին տես «Ընդարձակ տարեցոյց Ս. Փրկչեան ազգային հիանդանոցի», Կ. Պոլս, 1930, էջ 294—295: Ի դեպ, այս և հայ տպագրության հին շրջանի վերաբերյալ բազմաթիվ այլ ախայներ շարունակում են կրկնվել մեզանում: 1946 թ. տպագրված Գ. Լևոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատության մեջ (էջ 146, 246) և նրանից հետո գրված ուսումնասիրություններում, Զմյուռնիայի հայկական տպարանի հիմնադրումը 1759-ից ետ է տարվում, հասցվում է 1676 թվականը:

զնաց յայլ ուրեք. և ես դարձայ յԱլեկոնայ առ ոտս աշակերտի տեառն Ոսկանայ արհիեպիսկոպոսի՝ տեառն Կարապետի վարդապետի. և ուսայ ի նմանէ զարհեստ շարարարդութեան և մնացի բնդ վեհին Ոսկանայ արհիեպիսկոպոսի և թնորդոյ նորա Սողոմոնի ամս չորեքտասան... և զվեի փոխելոյն եոցա առ աստուած (թեղգծումն իմն է—Շ. Գ.), և իմ տեսեալ զշարակրութիւն և զանարդութիւն յամենայն կողմանց, վասնորոյ դիմեցի յերկիրն Հայանդիոյ ի վայելուչ քաղաքն յԱմստեղտամ...»։ Հիշյալ Կարապետ վարդապետը (Անդրիանացի) Ոսկանի իրփոռնոյում հիմնած տպարանում գործում էր 1669—1670 թվականներին։ Ուրեմն, այդ թվականներից սկսած 14 տարի՝ այսինքն մինչև 1683—84 թվականները, Մատթեոս ծառայում է Ոսկանի և նրա թնորդի Սողոմոնի մոտ, Ընդգծված բառերը ցույց են տալիս, որ Մատթեոսը իրսում է ոչ թե միայն Ոսկանի, այլև Սողոմոնի վախճանված լինելու մասին»։ Մատթեոսը Մարսելից տեղափոխվում է Ամստերդամ, տառեր ձուլել տալիս ու հիմնում իր սեփական տպարանը։ Քե ինչ է լինում Ոսկանի տպարանը. Մատթեոսը չի ասում։ Հավանաբար նրա զնայուց հետո է Պետրոս Զուղայեցին ձեռնարկում դեռևս 1669-ին Ոսկանի սկսած «Շարակնոցի» տպագրութեան ավարտման գործիս։ Այդ գրքի իշխատակարանում ասվում է. «Աւարտեցաւ տառս երաժշտական, որ և կոչի Չայնքաղ շարակնոց. ի տպարանի ս. աթոռոյն էջմիածնի և ս. Սարգսի զօրավարին և տեառն Ոսկանայ վարդապետի Սրևանցոյ յանգուցելոյ ի Քրիստոս, որ և զայս գիրքս ինքն էր սկսեր և մնացեալ էր այնպես կիս դատար (կիսակատար)։ Այս յետոյ ևս նուսաստ ամենից Պետրոսս Զուղայեցի ծառայելով տեառն Ոսկանայ վարդապետի և ուսայ ի նմանէ, զարհեստ շարարարդութեան, Ասկանցի զմնացեալն և հասուցի յաւարտ ի հայրապետութեան տեառն Նղիազարու ամենայն Հայոց կաթոլիկոսի»։

Պետրոս Զուղայեցու որեւէ այլ տպագրութիւն հայտնի չէ։ Ըստ երևույթին տպարանը այդ ժամանակներում անցել է պարտատերերին, իսկ սրանցից էլ Կ. Պոլսի կաթոլիկ հայերին։

Կա տարածված մի կարծիք, ըստ որի Ոսկանի տպարանի գույթն ու տառերը, որ պարտքերի դիմաց գրավել էր մի Ամստերդամցի, 1729 թ. Մխիթար Սերաստացին իր բարեկամ, վաճառական Հարությունի միջոցով գնել և տեղափոխել է Վենետիկ<sup>10</sup>։ Մխիթար Սերաստացու կողմից Ամստերդամից հայկական տառեր ձեռք բերելու փաստի մեջ, մեր կարծիքով, շփոթութիւն կա։ Ըստ երևույթին նա ձեռք է բերել ոչ թե Ոսկան Սրևանցու, այլ Վանանդեցիների տասերը։ Վերջիններին տպարանը դադարել և նշանց տառերն ու գույթը պարտատերերին էր անցել 1717 թ.։ Դրանից 12 տարի հետո Մխիթարի կողմից այդ տառերը գնելը ավելի յավանական է։

Ոչնչոր Քեղզիկի կարծիքն է. եռսելով Վանանդեցիների տպարանի 1717 թ. փակվելու մասին. նա ասում է. «12 տարի վերջ Մխիթար Սերաստացի հայ առևտրականի մը միջոցով նուրիշանեանց տառերու մայրերը ծախու կառնել և կը փոխադրէ դանոնք Վենետիկ»<sup>11</sup>։

Քե ստույգ որ թվականին են կաթոլիկները հիմնել Բեղզլի թաղամասի իրենց տպարանը դժվար է ասել։ Այս հարցում ևս տեղեկությունների միակ աղբյուրը նրանց տպագրած գրքերի տիտղոսաթերթերում ցույց տրված տարեթվերն են։ Գալեմբարյանը (նրան հետևելով նաև Ալպոյաճյանը) հիմնվելով կաթոլիկների 1696 թ. տպագրութիւնների վրա, նրանց տպարանի հիմնադրման տարեթիվը համարում են 1695 թ.<sup>12</sup>։ Մինչդեռ, ինչպես կտեսնենք ստորև, կաթոլիկների մեզ ծանոթ առաջին թվակիր գիրքը 1692 թ. Ամստերդամի տպագրութիւն ցույց տրված «Շարակնոցն» է և սույնով այդ տպարանի իմնադրման տարին պետք է 1691 կամ 1692 թ. համարենք. քանի դեռ ավելի հաստատ ու ստույգ թվականը չի պարզված։

Այժմ տեսնենք. թե ի՞նչ գրքեր են լույս տեսել այդ տպարանում և ովքեր են մասնակցել դրանց տպագրման և հրատարակման աշխատանքներին։

9 Ֆրանսիացի Օբրի գր Մոտրեյը իր ճամփորդական նոթերում (Aubry de la Motraye, Voyages, t. 1, p. 371) վկայում է, թե 1704 թ. Կ. Պոլսում հանդիպել է ոմն Սողոմոնի, որը Ֆրանսիայի դեսպանի հովանավորութեամբ քրմրոստ գրքեր էր տպագրում հայերեն լեզվով։ Անթաղում են, որ այդ Սողոմոնն ինքը Սողոմոն Հևոնյանն է (տե՛ս Շ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961, էջ 180—181)։ Մեր կարծիքով դա հավանական չէ։

10 Յ ո վ Տ. Ք ո ռ ո ս ե ա ն. Վարք Մխիթարայ Արրայի Սերաստացույ, Վենետիկ, 1901, էջ 431—432.—Յ. Ս. Գ ու Ր ի ե գ. Հայերեն գրքերի տպագրութիւնը Ամստերդամում 17—18-րդ դարերում, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1963, Վ 2, էջ 91—92։

11 Ք է ո դ ի կ. Տիպ ու տառ, էջ 168։

12 Յ. Գ ա լ է մ ք ե ա Ր ե ա ն, Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու, էջ 84։

Մեզ հայտնի ամենավաղ թվականը կրող գիրքը 1692 թ. «Շարակնոցն» է, որի տիտղոսաթերթի վրա իբրև հրատարակության վայր նշված է Ամստերդամը: Այդ գրքի՝ Կ. Պոլսի հայ կաթողիկոսների տպարանում լույս տեսած լինելու հիմնական ցուցանիշերը տառատեսակների, զարդերի, թղթի, ձևավորման ընդհանրություններն են կաթողիկոսների Կ. Պոլսի հրատարակությունների հետ: Այս հրատարակության օրինակներում նկատվում է հետաքրքիր մի առանձնահատկություն, որ է՝ միևնույն տպագրության մեկից ավելի տարբերակների առկայությունը: Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում կան այս «Շարակնոցի» չորս տարբերակներ: Դժբախտաբար դրանցից միայն երկուսը ախտղոսաթերթ ունեն, որոնք թեև արտաքինապես իրար նման են, բայց տարբեր շարվածքներ ունեն: Ահա դրանցից մեկի՝ № 1253 օրինակի անվանաթերթը.

Շարակնոց Երածշտական Եր/զեցմունք հոգևորական աստուածայնոց և Երջանկաց սրբ/բոց վարդապետաց/ Հայոց բարգմանչաց/ զկարգաւորութիւնս Էկե/ղեցոյ վայելչացու/ցանդաց/ի բուռն Բրիտտոսի. ՌՈՂԲ:/ն/ ի Հայոց ՌՃԽԼ:/Դեկտեմբեր ամսոյ Ը:/Տպեցեալ Յամսղև/լօտամուս /ֆաղաֆի/:

Ահա և № 1743 օրինակի անվանաթերթը.

Շարակնոց Երածշտական Երզեց/մուսք հոգևորական /աստուածայնոց և Երջանկաց/ սրբոց վարդապետաց /Հայոց բարգմանչաց/ զկարգաւորութիւնս Էկե/ղեցոյ վայելչացու /ցանդաց/ ի բուռն Բրիտտոսի. ՌՈՂԲ:/ն/ ի Հայոց ՌՃԽԼ:/Դեկտեմբեր ամսոյ Ը/ Տպեցեալ Յամսղև/լօտամուս /ֆաղաֆի/:

Մենք բաղդատեցինք նաև հիշյալ չորս օրինակների 75, 89, 359 էջերը: Բոլոր օրինակների 75-րդ էջերում միևնույն փայտափոր պատկերն է՝ ներքևում վեց տող բնագրով: Որովհետև պատկերը շարվածքի համեմատ փոքր է, տպագրողները այն շրջափակել են զարդերով: Օրինակներից յուրաքանչյուրն ունի յուրատեսակ շրջազարդ: Տարբերակներից երեքի 89-րդ էջերում դրված են միմյանցից տարբերվող վերջազարդեր, իսկ մեկը վերջազարդ չունի: Փոփոխություններ կան (թեև աննշան) նաև այդ և ուրիշ շատ էջերի շարվածքների մեջ: Նույն «Շարակնոցը» հետագայում ունեցել է երկու տպագրություն և՛ 1712 և 1718 թթ., դարձյալ Ամստերդամի անունով: Հայտնի է, սակայն, որ 1717 թ. Ամստերդամում այլևս հայկական տպարան չէր գործում: Պատմական աղբյուրները անհերքելիորեն հաստատում են, որ այդ թվականին Վանանդեցիների տպարանը խափանվեց վերջնականապես: Ընթացիկություններ եղան, թե 1692—1718 թթ., Վանանդեցիների տպարանից բացի, Ամստերդամի հայկական եկեղեցուն կից գործել է մի այլ տպարան: Այս էնթացիկությունը հիմնված է այդ տպագրությունների տիտղոսաթերթերում Ամստերդամի անվան հիշատակության վրա: Սակայն Ամստերդամի (ինչպես հետագայում մի շարք գրքերի վրա Մարսել և Լիվոռնո քաղաքների) անվան նշումը, տպագրության վայրի հետքերը կորցնելու մի ձև է միայն: Կան նաև այս «Շարակնոցների» Ամստերդամում տպագրված չլինելը հաստատող կողմնակի ապացույցներ: Նախ, դժվար է պատկերացնել մի տպարան, որը դոյություն ունեցած լինի քառորդ դարից ավելի և տպագրած լինի միայն մեկ անուն գիրքերից տպագրությամբ. այդքան մեծ ընդմիջումներով (1692—1712—1718): Բացի դրանից, մինչև 1713 թ. Ամստերդամում գոյություն չունեին հայկական քիչ թե շատ բարեկարգ եկեղեցի: Եղածը փոքրիկ մի տնակ էր, որ դեռևս 1663 թ. զնել էին Ամստերդամի հայերը և վերածել մատուռի: Կրոնական ծեսերն ու արարողությունները կատարելու համար այդ մատուռում աշխատում էր մեկ քահանա միայն<sup>13</sup>: Հաղիվ թե այդ քահանան կարողանար միաժամանակ տպարան հիմնել և գիրք տպագրել: Եվ հետո, չկար որևէ պատճառ կամ պատմական այնպիսի իրադրություն, որ «Շարակնոցների» տպագրիչներին ու հրատարակիչներին խանգարեր իրենց անունները հիշատակել գրքի սկզբում կամ վերջում, ինչպես սենում էին Վանանդեցիները:

Յրանսխացի հայագետ Ֆրեդերիկ Մակլերը 1926 թ. հրատարակեց Ամստերդամի համասարանում պահվող հայերեն հնատիպ գրքերի ցուցակը<sup>14</sup>: Այդ նույն տարում տպագրվեց նաև բանասիր Առ. Սարուխանի «Հոլլանդան և հայերը» ուսումնասիրությունը, որ Հոլանդիայի հայ գաղութների պատմության հետ միասին հիշատակում է նաև Ամստերդամում, Լեյդենում և Հոլլանդիայի այլ քաղաքներում պահվող հայերեն ձեռագրերն ու տպագիր գրքերը: Թե՛ Մակլերի

<sup>13</sup> Առ. Սարուխան, Հոլլանդան և հայերը ԺՁ—ԺԹ դարերում. Վիեննա, 1926, էջ 146—150:

<sup>14</sup> F. MacIer, Les livres imprimés arméniens de la Bibliothèque de l'Université d'Amsterdam. „Revue des Etudes Armentiens“, Paris, 1926, t. VI, p. 71—146.

և թե՛ Սարուխանի հիշատակած տպագիր գրքերը հիմնականում վանանդեցիների հրատարակություններ են: Ոչ Մակլիբրո, ոչ էլ Սարուխանը ցույց չեն տալիս 1692, 1712 և 1716 թվականները կրող այն «Շարակնոց»-ներից զբնե մեկը, որոնց տիտղոսաթերթերում իրրև տպագրության վայր նշված է Ամստերդամը: Սարուխանի վկայությամբ Ամստերդամի համալսարանի գրադարանում պահվող հնատիպ գրքերի մի մասը կրկնօրինակներ են (օրինակ, «Պատկերասեր պատկերատեսաց» գրքից գտնվել է 18 հատ):<sup>5</sup> Հազիվ թե Ամստերդամում երեք անգամ տպագրվեր «Շարակնոց» և ոչ մի օրինակ մնացած չլիներ այնտեղ:

Այսպիսով, Ամստերդամի անունը կրող 1692 թ. «Շարակնոցը», մեր կարծիքով Կ. Պոլսի հայ-կաթոլիկ տպարանի սամենավաղ թվական կրող գիրքն է:

1696 թ. հրատարակվել է երկու գիրք, որոնց վրա իրրև հրատարակության վայր նշված է Իտալիայի Լիվոռնո (Ալիկոռնա) քաղաքը: Դրանք են.

«Գիրք Բերականութեան արարեալ և շարադրեցեալ ի Խաչատուրէ Արղրումեցոյ... յԱլիկոննայ քաղաքի: Ներ բոլում փրկչին 1696, իսկ Հայոց Ռձևէ, մարտի Գ: Հրամանա մեծաւորաց»:

«Գիրք պատմութեան կայսերն Փոնցիանոսի... Ի յԱլիկոննայ քաղաքի. քվոջ փրկչին 1696. և Հայոց 1145 մայիսի 25»:

Այս գրքերից առաջինում, բացի հեղինակի՝ Խաչատուր էրզրումեցու անունից, կա նաև սրբագրողի և վկայությունը գրող Հովհաննես վարդապետ Կաֆայեցու անունը, իսկ երկրորդ գրքի փոքրիկ հիշատակարանում բերված են միայն հրատարակչի անվան սկզբնատառերը՝ «Հոգաբարձութեամբ, ծախիք և սրբագրութեամբ նուստ ումեմն Մ. Ս. Դ.»:

Մեկ տարի ընդմիջումից հետո, 1698 թ. այս տպարանում լույս են ընծայվում հետևյալ չորս գրքերը.

«Բառգիրք Հայոց. Աբարեալ ի սուրբ էջմիածին Երեմիայ վարդապետէ: ... Ի յԱլիկոննայ, քաղաքի. և քվականութեան հայոց Ռձևէ. յունիս ժ և Ի քվին փրկչին, 1698 յունիսի ժ»:

«Գիրք Աշխարհաց և առասպելարանութեանց, որ է Ազուլսագիրք: Ի սուրբ էջմիածին Երեմիայ զվարդապետէ... և քվականութեան Հայոց Ռձևէ. յունիսի ժ և Ի քվին փրկչին 1698 յունիսի ժ»:

«Գիրք շնորհոփ... ըսկիզբն Եղափ Երածշտական Երգս շարականաց... Տպեցեալ Յամսդէլօտամում քաղաքի: Թուի փրկչին 1698-ին Յամսեանն յուլիսի 18, իսկ հայոց Ռձևէ...»:

«Գիրք խոստովանութեանց... Հոգաբարձութեամբ Աստուածատուրի Ազուլեաց Դաշտեցոյ... քուջ փրկչին ՌՌՂԸ և Հայոց Ռձևէ: Ի Կոստանդինուպոլիս»:

Սրանք բոլորն էլ թեև տպագրվել են Կ. Պոլսում, միևնույն տպարանում, բայց միայն մեկի՝ «Գիրք խոստովանութեանցի» վրա է «Կ. Պոլիս» նշված:

«Բառգիրքը» և «Շարակնոցը» տպագրել է Սարգիս Սահեթճին: Այս առթիվ Գ. Դալմեթյարյանը գրում է. «Միտ զնելու է նաև՝ որ միևնույն Սահեթճի Սարգիսը 1698 յունիսի 10-ին Լիվոռնոյի մէջ Բառգիրք կը տպէ և նոյն տարին յուլիսի 22-ին Ամսդերտամ կը տպէ Շարակնոց. երկու ստուար գրքեր 42 օրուան մէջ սկսեր է տպել իրարմէ իրր երկու ամսուան հետո բաղաքներու մէջ: Ինձ համար ստոյգ է, որ Սարգիս եպ. այս միջոցին Պոլսէն մեկնած չէր»<sup>16</sup>:

Սարգիս Սահեթճին վճռական դեր է խաղացել հայ կաթոլիկների տպարանի հիմնադրման և գործունեության հարցում<sup>17</sup>: Իր Սիմեոն անունով աշակերտի հետ նա հետագայում ևս հրատարակում է գրքեր, որոնց մասին խոսք կլինի ստորև:

«Գիրք աշխարհացի» հրատարակիչը Սրեմիա Մեղրեցին է: Հայտնի է, որ «Բառգիրքը» և Կինակելուց բացի Մեղրեցին զբաղվել է տպագրական-հրատարակչական գործով:

1698 թ. հրատարակված գրքերից չորսրորդի՝ «Գիրք խոստովանութեանցի» անվանաթերթում նշված է հրատարակիչը միայն. «Հոգաբարձութեամբ Աստուածատուր Ազուլեաց Դաշտեցոյ»: Որ «Հոգաբարձութեամբ» բառը այստեղ ձխասերը հոգացողի և հրատարակչի իմաստ ունի, երևում է 1703 թվականի «Կատակգիրք»-ից: Այս գիրքը տպագրվել է Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանում, իսկ ծախսերը հոգացել և հրատարակել է Աստուածատուր Ազուլեաց Դաշտեցին:

<sup>15</sup> Ա. Ս. Սարուխան, Հոլլանդան և Հայերը, էջ 182:

<sup>16</sup> Գ. Լ. Դալմեթյարյան, Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու, էջ 84:

<sup>17</sup> Սարգիս Սահեթճուն չպետք է շփոթել 1701—1702 թվականներին «Տօնացոյց»-ի տպագրությամբ հանդես եկած Սարգիս Դպրի հետ, որի տպարանն իր որդի Սարտիրոս Դպրի շանքերով հարատևել է մինչև 1750-ական թթ.:

*Քեզոցլու թաղամասի տպարանի 1699 թ. հրատարակութուններից հայտնի են երկուսը.*  
«Տոմարաց գիրք Հայոց, Հոռմայեցոց և Կարգատոմար, ընդ որոց և Ետաղ Յովասափու...  
Ի մայրաքաղաք Կոստանդնուպոլիս, ի քուսկանիս Հայոց Ռձնի»:

«Վարդապետութիւն Բրիտոնեական... Ռուպերոսի Պելլարմինոսի»:

*1700—1702 թվականներին այստեղ տպագրվել են.*

«Գիրք մեկնութեան Յայտնութեանն սրբոյ Յոսիաննու անտարանչի: ...Տպագրեցեալ են և տպարանում սրբոյ էմիաձնի և սրբոյ Սարգսի գորավարի: ...Ի Կոստանդինուպոլիս քաղաքի: Եւ քուսկանիս Հայոց ՌձՄ, և Բ-ին յունվարի ամսոյն: Եւ ի քվին փրկչին 1700 յունվարի Բ»:

«Համառօտ մեկնութիւն Երզոյ Երզոցն Աղոյմոնի: Շարագրեցեալ ի Խաչատրոյ էրզումն-ցոյ... Ի Կոստանդնուպոլիս քաղաքի: Եւ քուսկանիս Հայոց ՌձՄ յունվարի ամսոյն Բ: Եւ ի քվին փրկչին 1700, յունվարի Բ»:

«Գիրք Թոմաի Գեմրեցոյ, Կանոնիկոսի կրօնաւորի ի կարգէ սրբոյն Սոստինոսի, Յաղագս համանտեւմանն Քրիստոսի: ...Եւ տպագրեցեալ ի Կոստանդինուպոլիս... Ի քուսկանիս Հայոց Ռձն և Բ-ին, նոյտեմբերի ամսոյն»:

«Գիրք յարուբնից յաղագս նորէկ տղայոց և մանկանց անկրթից, ...Ներտպարանում սրբոյն էմիաձնի և սրբոյն Սարգսի գորավարի, 1700»:

*Ըստ Ղազարիանի՝ «Նոյն ճակատով (անվանաթերթով—Հ. Դ.), թուականով և գիրքով ուրիշ տպագրութիւն մըն ալ կա ի Կ. Պոլիս»<sup>18</sup>:*

«Թէօփիլոս, այսինքն խօսակցութիւն Թէօփիլոսի ընդ վարդապետին յաղագս ճմարտութեան և շերմեանդութեան: ...Ի Ալիկօնեայ քաղաքի: Յամի տեառն 1701, յունվարի...»:

«Գիրք մտածական աղօթից, լանալի շերմեանդակերտ... Տպագրեցեալ ի Կոստանդնուպոլիս, ի քուսկանիս Քրիստոսի, 1701, իսկ ըստ Հայոց ՌձՄ-ին ի մայիսի ամսոյ ԻԲ-ին»:

«Տաղարան վաչկուշ և զեղեցիկ ի զանազանից բանաստեղծից... Ի սուրբ էմիաձնի երեմիա վարդապետ: ...Եւ տպագրեցեալ ի Կոստանդնուպոլիս, ի քուսկանիս Քրիստոսի 1701, իսկ ըստ Հայոց ՌձՄ-ին ի մայիսի ամսոյ ԻԲ-ին»:

«Խոստովանարան կամ Ամբաստանարան... Եւ տպագրեցեալ ի Կոստանդնուպոլիս, ի քուսկանիս Քրիստոսի 1701, իսկ ըստ Հայոց ՌձՄ-ին, ի մայիսի ամսոյ ԻԲ-ին»<sup>19</sup>:

«Գուծիք շարչարանաց փրկչին»: *61 էջանոց այս գրքույկից մեկ օրինակ պահուում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում, մեկ օրինակ էլ՝ Երևանի գրականութեան և արվեստի թանգարանում: Երկու օրինակներն էլ անվանաթերթ կամ հիշատակարան չունեն:*

«Յիսուս որդի անուն տեառն ներսևի Հայոց կարողիկոսի ասացեալ բան մխիթարութեան... Յամի տեառն 1702 յունվար 8...»:

«Գիրք հայելի վարուց, որ ասի Հարանց վարք: Տպագրեցեալ... Ի քվին Քրիստոսի 1702: Իսկ ըստ Հայոց ՌձՄԱ, մայիսի ամսոյ ԻԱ-ին...»:

«Մեկնութիւն ներողութեանց, որք շնորհին յեկեղեցոյ ի ձեռն սրբազանի փափին: ...Յամի տեառն 1702»:

*1703 թ. այս տպարանից որնէ հրատարակութուն հայտնի չէ: Հաջորդ տարվա թվագրութեամբ և Կ. Պոլսի անունով հանդիպում ենք Երեք գրքերի, որոնցից սուսջին երկուսը Սարգիս Մաշեթճու հրատարակութուններն են:*

«Գիրք որ անուանեալ կոշի Լուսաշաիղ արարեալ և սանմանեալ Գալլստի վարդապետի Ամասեացոյ: ...Եւ ի յամի փրկչին ՌէձԳ-ին և Հայոց ՌձՄԳ: Ի մայրաքաղաք Կոստանդնուպոլիս»:

«Գիրք Բուրաստան աղօթից... Քարգմանցեալ ի յատենացոց լեզուէ ի հայկական բարբառ, աշխատասիրութեամբ ուրումն Ստեփաննոսի վարդապետի Լեհացոյ... յամի փրկչին ՌէձԳ-ին, և Հայոց ՌձՄԳ: Ի մայրաքաղաք Կոստանդնուպոլիս»:

«Ստանաւոր բանք ի գործս առաքելոց, շարագրեցեալ ի վերապատուելու Բանանայլ տէր կոմիտասէ Կոստանդնուպոլսեցոյ... Տպագրեցեալ ի Կոստանդնուպոլիս, ներ տպարանում

<sup>18</sup> Ա. Ղազարիան, *Հայկական նոր մատենագիտութիւն, հատ. 1, էջ 132:*  
<sup>19</sup> Ուշագրավ է, որ վերջին երեք գրքերն էլ հրատարակութեան միևնույն տարեթիվն ու ամսաթիվն ունեն՝ «ի թուին Քրիստոսի 1701, իսկ ըստ Հայոց ՌձՄ-ին, ի մայիսի ամսոյ ԻԲ-ին»։ Միևնույն տարեթիվն ու ամսաթիվն ունեն նաև 1698-ին տպագրված գրքերից երկուսը՝ «Գիրք աշխարհաց»-ն ու Երեմիայի «Բարոգիրք»-ը և 1700-ի «Գիրք մեկնութեան յայտնութեանն» ու «Համառօտ մեկնութիւն Երզոյ Երզոցն»։ Արդյոք միևնույն օրն են սկսել տպագրվել, թե՛ հրատարակիչները նույն ամսաթիվերն են գրել այլ նկատառումներով:



բերոյ էջմիածնի և սբոյ Սարգսի զօրավարի: Յամի տեանն ՌէճԴ հոկտեմբերի ԺԸ: Համա-  
հաւանօրեամբ ոմանց աստուածաբանից վարդապետաց:

1705 թ. սկսվում է հայ կաթողիկոսների Բեյզոզլի թաղամասի տպարանի 1158 էջանոց ամե-  
նածավալուն գրքի՝ Աստվածաշնչի տպագրությունը, որն ավարտվում է երկու տարի հետո,  
1707 թ.: Ունի մի...քանի անշուր վարդեր և մեկ դիմանկար՝ ամենավերջին էջի վրա: Ունի նաև  
փորրիկ հիշատակարան, ուր ասվում է.

«...Արդ՝ եղև զրաւ Աստուածաշունչ մատենիս: Թ՛վին Հայոց ՌժՄԶ:  
Ի շնորհազարդ հայրապետութեան և կաթողիկոսութեան սուրբ Աթոռ-  
ոյն էջմիածնայ ամենայն Հայոց տեանն Աղևկոսանցրի ճուղայեցոյց:  
Ը յօրինակս Տնոյ տպեցեալ լուսաւորեալ հոգի Ոսկան վարդապետի.  
յար և նման. ոչ աւելի և ոչ նուազ, սակայն մանր գրով: Ի տպա-  
րանս աղագականի նոյնոյ Ոսկանի վարդապետի Լաղինացոյ Պետրոսի.  
Ի մայրաքաղաքն Ստանպոլ. Ղալաթիայ, ի թաղն Պէկոզլի կոչեցեալս:

Բաճասերներից շատերը հիմնովելով այս հիշատակարանի վրա, Պետրոս Լատինացուն հա-  
մարում են տպարանատեր, ինչպես և տպագրիչ մի շարք այնպիսի գրքերի, որոնց հրատարակ-  
ման գործում Պետրոս Լատինացին դուցի ոչ մի մասնակցություն չի ունեցել: Իրականում Պետ-  
րոս Լատինացու անունը իբրև հրատարակչի կա միայն Աստվածաշնչի հիշատակարանում, որ  
Պետրոսն իրեն անվանում է Ոսկան Երևանցու աղագական: Ըստ երևույթին այդ աղագացությունը  
հորինված է հետևյալ միտումով. ինչպես ասվում է վերը բերված հիշատակարանում, Պետրոս  
Լատինացին այն վերահրատարակել է «հար և նման» Ոսկանի Աստվածաշնչի նա օգտագործել  
է նաև Ոսկանի տպարանից կաթողիկոսների տպարանին անցած գլխազառոցները, վերջապահները,  
զարդագրերը, իսկ վերջում զետեղել է Ոսկանի Աստվածաշնչի Բ էջակալության 538 էջի սրբա-  
պատկերը: Այս ամենը ժամանակակիցները կարող էին դիտել իբրև ուրիշի պատրաստի աշխա-  
տանքից օգտվելու մի արարք և կարող էր աննպաստ հետևանքներ ունենալ: Ոսկանի աղագական  
հռչակվելով Պետրոսը իրեն պահանջագրում էր ժամանակակիցների իրավական կամ բարոյա-  
կան դատապարտությունից: Այս ձևով հեշտանում էր նաև տպարանի իսկապես տերերին թար-  
ցրելու և մեկ մարդու անունով հայտարարելու:

Այս տպարանի ամենագործում շրջանը սկզբնավորումից մինչև 1705 թ. է: Դրանից հետո,  
մինչև տպարանի փակվելը՝ 1718 թ., լույս են տեսնում համեմատաբար քիչ թվով գրքեր, դարձ-  
յալ առաջվա նման տպագրիչ-հրատարակիչների և տպագրության վայրի մասին կեղծ կամ  
կեղտուր տեղեկություններով: Ահա 1708—1718 թթ. առայժմ հայտնի հրատարակությունների  
ցուցակը:

«Գիրք տոմարաց Հայոց, Հոռոմայեցոց և պարզատմար բնդ ուրոց և տաղ Յովսափու,  
մութմեխաղաց և Երազահան: ...Ի Մարչիլիայ քաղաքի: Եւ քուարեւորեան Հայոց ՌժՄԷ,  
յունիս ամսոյն ԺԱ: Եւ ի քվին փրկչին 1708 յունիսի ԻԱ»:

«Կարգաւորութիւն հասարակաց աղօրից Եկեղեցոյն մեծին Հոռոմայ: ...Ի քվականութեան  
փրկչին Քրիստոսի ՌՉԸ, և Հայոց ՌժՄԷ յունիսի ԻԵ: Ի Մարչիլիայ քաղաքի»:

«Գիրք մտածական աղօրից, բանալի ջերմեռանդակերտ... Ի քվականութեան փրկչին Քրիս-  
տոսի ՌՉԸ և Հայոց ՌժՄԷ, սեպտեմբեր Ի: Ի Մարչիլիայ քաղաքի»:

«Կարգաւորութեան հասարակաց աղօրից... Եւ յամի փրկչին ՌՉԺԹ-ին Եւ Հայոց ՌժՄԸ:  
Ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս»:

«Գիրք. զբզուկս այս պատմ Եաի վասն զպստեանն Յիսուսի Երուսաղէմ... Ասացեալ երա-  
նելոյն Յակորայ ՏԵառնեղբօրն: ...Յամի փրկչին ՌէճԻ-ին և Հայոց ՌժՄԹ-ին: Ի մայրաքա-  
ղաքն Կոստանդնուպոլիս»:

«Գիրք դպրութեան Եւ տաղարան վայելուչ Եւ գեղեցիկ ի գանազանից բանաստեղծից... Եւ  
ի յամի փրկչին ՌէճԻ-ին և Հայոց ՌժՄԹ-ին: Ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս»:

«Գիրք սաղմոսաց Գարի: ...Ի Մարչիլիայ քաղաքի: Եւ քուարեւորեան Հայոց ՌժՄԹ յու-  
նուարի ամսոյ Ի, և քվին փրկչին 1710»:

«Մաշտոց»: Կ. Պոլիս, 1711:

«Կարգաւորութիւն հասարակաց աղօրից Եկեղեցեաց Հայաստանեայց: ...Եւ ի յամի փրկչին  
ՌՉԺԹ-ին և Հայոց ՌՉԿԱ: Ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս»:

Այս «Ժամագիրքը» պահվում է Երևանի Մատենադարանում: Ըստ Գ. Զարբանալյանի և  
Ա. Ղազիկյանի՝ միևնույն տարում, նույն անվանաթիւրով և չափով տպագրվել է երկրորդ

անգամ, երկու հրատարակություններն իրարից տարբերվում են Լչերը շրջափակող զարդերով: Այստեղ բերված օրինակն ունի զարդափակ Լչեր, իսկ մյուսը՝ աստղափակ է: Այս օրինակի հիշատակարանում ավարտման տարեթվի կողքին նշված է «օգոստոսի Ժ» ամսաթիվը, իսկ աստղափակ երեսներով «Ժամագրքի» ամսաթիվը, ըստ Ղազիկյանի նկարագրության «Նոյեմբերի 1»:

«Ճաշոց գիրք վեղեցկատիպ եւ վայելուչ... Ի տպարանում ծառայի ձերոյ Սարգսի նւաստի ընդ Հովանեաւ ս. Եկեղեցւոյն Աստուածածնի, ի քվին փրկչին ՌէժժԲ, իսկ ըստ Հայոց ՌՃԿԱ յուլիսի, ի Կոստանդնուպոլիս»:

«Սկիզբն գրոցս որ կոչի ժողովածու... եւ բուարերութեան Հայոց ՌՃԿԲ յունվարի ամսոյն Ի: եւ ի քվին փրկչին 1713, յունվարի Ի: Ըստամպոյ քաղաքի»:

«Մերկանոց ճոզեւոր, այսինքն կարճաոտ մեկնութիւն քրիստոնէականի վարդապետութեան... Ի բուարեւորութեան տեառն մերոյ Յիսուսի ՌէժժԲ-ին»:

«Քիրք դպրութեան եւ տաղարան վայելուչ եւ գեղեցիկ ի գանազանից բանաստեղծից... եւ ի յամի փրկչին 1714, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս»:

«Համառոտ իմն մեկնութեան սրբոյ Աւետարանի... Շտրադրեցեալ ի պատրի Պետրոս Արքայապետի կարգէ Յիսուսի Քրիստոսի... Յամի տեառն 1714 մարտի ամսոյ ԺԲ: Մեծաւորի հրամանաւ»:

«Սրինեւրգութիւն ոգեւորք եւ մաղբանք աղօթական... Շտրադրեցեալ ի տէր Գրիգորէ առաքելական վարդապետէ Եղեղեցւոյ, միսիօնարէ առաքելական: Քրիստոսի փրկչին մերոյ Եւեմարմնութեան քսին ՌՉԺԳ, օգոստոսի ԺՁ: Տպագրեալ ի Կոստանդնուպոլիս: Մեծաւորի հրամանաւ»:

«Տօնացոյց... Ի քվին փրկչին 1715, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս»:

«Ճշմարիտ իմաստութիւն... Շտրադրեցաւ իտալերէն յունեմնէ վարդապետէ Ե քարզմանեցաւ ի ճայ բարբառն յայլմէ ումեմնէ Աստուծոյ ծառայէ ի նոյն կարգէն: ...Ի քվին Քրիստոսի ՌՉԺԸ, եւ Հայոց ՌՃԿԷ, յունվարի Ի: Ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս: Հրամանաւ մեծաւորաց»:

«Քիրք տօմարաց Հայոց, Հոսմայեցոց եւ պարգատմար, ընդ որոց եւ տաղ Յովասափու... եւ ի բուարեւորութեան Հայոց ՌՃԿԷ, մայիս ամսոյն Ի: եւ ի քվին Քրիստոսի փրկչին ՌՉԺԸ, մայիս ամսոյն Ժ: Ի մայրաքաղաքն Ըստամպոլ»:

Այստեղ թվարկված գրքերով չի սպառվում Կ. Պոլսի հայ կաթողիկոսների գաղտնի տպարանի հրատարակությունների ցուցակը: Կհանդիպեն դարձյալ ուրիշ հրատարակություններ, որոնք չեն նշվել սույն հոդվածում՝ մատենագիտական աղբյուրներում և Երևանի գրադարաններում չլինելու պատճառով: Սակայն, այստեղ բերված օրինակների հետ համեմատելով, հնչուությամբ կարելի է որոշել դրանց հրատարակության վայրն ու տպարանը:

1718 թ. հետո Կ. Պոլսի Բեգօղլի թաղամասում տպագրված գրքերի շենք հանդիպում: Հովանեն Կոլտ պատրիարքի եռանդուն գործունեության շնորհիվ կաթողիկոսներից շատերը բանտարկվում են ու հեռացվում ասպարեզից: Նրանց նշանավոր պարագլուխներից մեկը, տպագրության գործում մեծ դեր խաղացած ՍահակՅԻ Սարգիս Դասպարյանը, Գ. Գալեմքյարյանի ասելով, դեռևս 1714 թ. բանտարկվել էր թուրք իշխանությունների կողմից և մահմեդականություն ընդունելով ազատվել մահապատժից<sup>20</sup>, Մյուսները թաքնվել կամ փախել էին Կ. Պոլսից: Կառավարությունն էլ արգելել էր կաթողիկոսների գործունեությունը: Տպարանը բռնագրավվել և անցել էր ուրիշների: Դեռևս պարզված չէ, թե ում են անցել կաթողիկոսների Բեգօղլի թաղամասի տպարանի տառերն ու տպագրական այլ պարագաները, միայն նրանց գործածած փորագիր պատկերները, այնուհետև հանդիպում են այդ ժամանակների նշանավոր տպագրիչ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու և նրա ժառանգների հրատարակած գրքերում:

Վերագրյալ փաստերը հաստատում են, որ 1690—1700 թթ. լիվոնոյում և Մարսելյում հայկական տպարաններ չեն եղել: Հիշյալ ժամանակներում այդ քաղաքների անուններով լույս տեսած գրքերը տպագրվել են Կ. Պոլսում:

Բացառվում է նաև 1692—1718 թթ. Ամստերդամում, վանանդեցիների տպարանից բացի, Եկեղեցուն կից հայկական մի երկրորդ տպարանի գոյությունը: Այս քաղաքի տպագրություն ցույց տրված 1692, 1712 և 1718 թթ. «Շարականոցները» նույնպես տպագրվել են Կ. Պոլսում:

Թևոզիկի, Լեռնի, Լեռնյանի մոտ և քանասիրական այլ աղբյուրներում հիշատակվող Կ. Պոլսի «Ս. Էջմիածնի և ս. Սարգսի զօրավարի», «Յանուն սուրբ էջմիածնի» անուններով կամ

20 Գ. Գալեմքյարյանը, Կենսագրություններ Երկու հայ պատրիարքներու, էջ 93 և 95:

*Պետրոս Լատինացու, Աստվածատուր Ազուլյաց Դաշտեցու, Սահեթէի Սարգիս Եվդոկիացի Գասպարյանի սեփականությունը համարված, նորարաց ինքնուրույն տպարաններ լին գործելու Այդ բոլոր անուններով հրատարակված գրքերը տպագրվել են Բեզողի Թաղամասի հայ կաթոլիկների միջնույն տպարանում, որը բավականին բեղմնավոր գործունեություն է ունեցել և տպագրած գրքերի քանակով ետ չի մնացել Կ. Պոլսում այդ ժամանակի գործող Գրիգոր Սարգվանեցու, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու և Սարգիս Դպրի տպարաններից:*

А. М. Давтян

## ТАЙНАЯ ТИПОГРАФИЯ АРМЯН-КАТОЛИКОВ В КОНСТАНТИНОПОЛЕ И ЕЕ ДЕЯТЕЛЬНОСТЬ

### Р е з ю м е

Одно из главных средств идеологической борьбы классов и общественных течений— печатное слово, книга. История книгопечатания может во многом способствовать правильному освещению той или иной эпохи. Для изучения жизни и общественных отношений константинопольских армян конца XVII и начала XVIII вв. большой интерес представляет деятельность тайной типографии армян-католиков. В этот период усиливались внутренние противоречия общественных группировок. Особенно острый характер носила борьба между армянами-григорианцами и армянами-католиками. Каждая из сторон стремилась занять высокие посты в национальных организациях.

Для распространения своего влияния среди широких масс армяне-католики с помощью своих европейских единоверцев, основали типографию.

По сравнению с армянами-григорианцами они были малочисленны и слабы. Турецкое правительство воочью поддерживало армян-григорианцев (по существу же правительство старалось сеять междоусобицы и этим ослабить обе стороны). В этих условиях католикам приходилось действовать тайно. Часто на титульных листах своих изданий вместо Константинополя умышленно указывали названия европейских городов—Амстердам, Ливорно, Марсель. При неизбежности правильно указать место издания, типографию называли разными именами.

Наши исследователи, основываясь на этих неправильных данных, издания одной и той же типографии приписывали различным типографиям и издателям, тем самым допуская множество неточностей. В прошлом филологи касались этого вопроса очень бегло.

Сравнение шрифтов, заставок, иллюстраций и других издательских данных показывает, что в течение четверти века в этой типографии издано около пятидесяти названий книг. Типография основана в 1692 г. и с перерывами действовала до 1718 года. Организаторы были арестованы или бежали из Константинополя, а типография была закрыта.